ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

ք. Վայք **15/05/2024**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 06
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 9 անդամներ:

Բացակա էին՝ Թարո Ավետյանը, Սոնա Կարապետյանը, Աստղիկ Հակոբյանը, Կառլեն Մինասյանը, Եվա Մովսիսյանը, Արմինե Ոսկանյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Մխիթար Մաթեվոսյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Անուշ Ղազարյանը

Լսեցին
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 15-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՈՒՇ ՂԱԶԱՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով.

1.Վայք համայնքի ավագանու 2024 թվականի ապրիլի 12-ի թվով 4-րդ հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին /զեկուցող՝ Ա.Ղազարյան/:
2. Վայք համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելուն համաձայնություն տալու, տարեկան վարձավճարի չափը և պայմանները հաստատելու մասին /զեկուցող՝ Ս.Իխտիարյան/:
3. Վայք համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդային եղանակով օտարելուն համաձայնություն տալու, վաճառքի մեկնարկային գներն ու պայմանները սահմանելու մասին /զեկուցող՝

Ս.Իխտիարյան/:
4. Վայք համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին /զեկուցող՝ Ս.Իխտիարյան/:
5. Վայք համայնքի Մարտիրոս բնակավայրի 1-ին փողոց, 1-ին նրբանցք, 2/1 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող մշակույթի տան շենքի հարակից 0,12 հա մակերեսով հողատարածքը Հայաստանի Հանրապետությանը նվիրաբերելու մասին /զեկուցող՝ Ս.Իխտիարյան/:
6. Դրամական օգնություն տրամադրելու մասին /զեկուցող՝ Ն.Հովակիմյան/:
7. ՀՀ Վայոց ձորի մարզի Վայք համայնքի ավագանու անդամներին դրամական փոխհատուցում տրամադրելու մասին /զեկուցող՝ Ա. Ղազարյան/:
8.Վայք համայնքի խնամակալության և հոգաբարձության նոր հանձնաժողով ստեղծելու և համայնքի ավագանու 17.10.2022 թվականի թիվ 67-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին /զեկուցող՝ Ա.Ղազարյան/
9. Վայք համայնքի Սարավան բնակավայրի տարածքում արևային կայան կառուցելուն համաձայնություն տալու մասին /զեկուցող՝ Ս.Իխտիարյան/:
10. Վայք համայնքի Սարավան բնակավայրի տարածքում արևային կայան կառուցելուն համաձայնություն տալու մասին/զեկուցող՝ Ս.Իխտիարյան/:
11.Վայք համայնքի բնակիչ Սիմոն Բաբայանի դիմումը քննարկելու մասին /զեկուցող՝ Շ.Ազատյան/:
12.Վայք համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը և ժամը սահմանելու մասին /զեկուցող՝ Ա.Ղազարյան/:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 47-Ա/

Լսեցին
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՉԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ԱՄՍԱԿԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍԱՄՎԵԼ ԻԽՏԻԱՐՅԱՆ/

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի հիման վրա, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 46-րդ, 48-րդ հոդվածներին և 76-րդ հոդվածի 3-րդ մասին, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետին համապատասխան՝

1.Տալ համաձայնություն.

ա/Վայք համայնքի սեփականություն համարվող, Զեղեա բնակավայրում գտնվող գյուղատնտեսական նպատակային նշանակության 1.04836 հա մակերեսով հողամասը (հողատեսքը՝ վարելահող, կադաստրային ծածկագիրը՝ 10-023-0309-0032) մրցույթային եղանակով վարձակալության

իրավունքով օգտագործման տրամադրելու մասին Վայք համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ հաստատելով վարձակալությամբ
օգտագործման տրամադրելու նպատակը՝ գյուղատնտեսական գործունեության համար, տարեկան վարձավճարի մեկնարկային չափը՝ 10 000 (տասը հազար) ՀՀ դրամ, հողամասը վարձակալմամբ օգտագործելու ժամկետը՝ 25 (քսանհինգ) տարի:
բ/Վայք համայնքի սեփականություն համարվող, Զառիթափ բնակավայրում գտնվող, գյուղատնտեսական նպատակային նշանակության 5.9 հա մակերեսով հողամասը (հողատեսքը՝ արոտավայր, կադաստրային ծածկագիրը՝ 10-022-0238-0059) մրցույթային եղանակով վարձակալության
իրավունքով օգտագործման տրամադրելու մասին Վայք համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ հաստատելով վարձակալությամբ
օգտագործման տրամադրելու նպատակը՝ գյուղատնտեսական գործունեության համար, տարեկան վարձավճարի մեկնարկային չափը՝ 100 000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ, հողամասը վարձակալմամբ օգտագործելու ժամկետը՝ 25 (քսանհինգ) տարի:

գ/Վայք համայնքի սեփականություն համարվող, Զառիթափ բնակավայրում գտնվող գյուղատնտեսական նպատակային նշանակության 0.11877 հա մակերեսով հողամասը (հողատեսքը՝ վարելահող, կադաստրային ծածկագիրը՝ 10-022-0231-0012) մրցույթային եղանակով վարձակալության
իրավունքով օգտագործման տրամադրելու մասին Վայք համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ հաստատելով վարձակալությամբ
օգտագործման տրամադրելու նպատակը՝ գյուղատնտեսական գործունեության համար, տարեկան վարձավճարի մեկնարկային չափը՝ 2 700 (երկու հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ, հողամասը վարձակալմամբ օգտագործելու ժամկետը՝ 25 (քսանհինգ) տարի:

դ/Վայք համայնքի սեփականություն համարվող, Արտավան բնակավայրում գտնվող գյուղատնտեսական նպատակային նշանակության 0.58849 հա մակերեսով (հողատեսքը՝ արոտավայր, կադաստրային ծածկագիրը՝ 10-011-0116-0064), 19.82555 հա մակերեսով (հողատեսքը՝ արոտավայր, վարելահող, կադաստրային ծածկագիրը՝ 10-011-0116-0066), 1.03848 հա մակերեսով (հողատեսքը՝ վարելահող, արոտավայր, կադաստրային ծածկագիրը՝ 10-011-0116-0063), 2.57739 հա մակերեսով (հողատեսքը՝ վարելահող, կադաստրային ծածկագիրը՝ 10-011-0102-0026), 1.09065 հա մակերեսով (հողատեսքը՝ արոտավայր, վարելահող, կադաստրային ծածկագիրը՝ 10-011-0116-0065) հողամասերը մրցույթային եղանակով վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու մասին Վայք համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ հաստատելով վարձակալությամբ
օգտագործման տրամադրելու նպատակը՝ գյուղատնտեսական գործունեության համար, տարեկան վարձավճարի մեկնարկային չափերը, համապատասխանաբար՝ 4 300 (եչորս հազար երեք հարյուր) ՀՀ դրամ, 136 500 (մեկ հարյուր երեսունվեց հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ, 7 100 (յոթ հազար մեկ հարյուր) ՀՀ դրամ, 6 650 (վեց հազար վեց հարյուր հիսուն) ՀՀ դրամ, 6 800 (վեց հազար ութ հարյուր) ՀՀ դրամ,հողամասը վարձակալմամբ օգտագործելու ժամկետը՝ 25 (քսանհինգ) տարի:

ե/Վայք համայնքի տարածքում գտնվող, պետական սեփականություն համարվող Զառիթափ բնակավայրում գտնվող գյուղատնտեսական նպատակային նշանակության 0.18 հա մակերեսով հողամասը (հողատեսքը՝ արոտավայր, կադաստրային ծածկագիրը՝ 10-022-0293-0008) մրցույթային եղանակով վարձակալության
իրավունքով օգտագործման տրամադրելու մասին Վայք համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ հաստատելով վարձակալությամբ

օգտագործման տրամադրելու նպատակը՝ գյուղատնտեսական գործունեության համար, տարեկան վարձավճարի մեկնարկային չափը՝ 1 500 (մեկ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ, հողամասը վարձակալմամբ օգտագործելու ժամկետը՝ 10 (տասը) տարի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 48-Ա/

Լսեցին

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ՎԱՃԱՌՔԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍԱՄՎԵԼ ԻԽՏԻԱՐՅԱՆ/

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի հիման վրա, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածին, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի «գ» ենթակետին և 22-րդ կետին համապատասխան՝

1. Համաձայնություն տալ

ա/ Վայք համայնքի Վայք քաղաքի Ջերմուկի խճուղի 18/19 հասցեում գտնվող 10-003-0004-0403 կադաստրային ծածկագրով, համայնքային սեփականություն (վկայական՝ 03052024-10-0019, գաղտնաբառ՝ ZBA43ATHJBLF) հանդիսացող հողամասը (նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման, մակերեսը՝ 0,0921 հա) հասարակական կառուցապատման նպատակով աճուրդային եղանակով օտարելու մասին Վայք համայնքի ղեկավարի առաջարկությանը. հողամասի վաճառքի մեկնարկային գինը սահմանել 1729 400 (մեկ միլիոն յոթ հարյուր քսանինը հազար չորս հարյուր) ՀՀ դրամ:

բ/ Վայք համայնքի Վայք քաղաքի Ջերմուկի խճուղի 3-րդ նրբանցք 1/1 հասցեում գտնվող 10-003-0004-0400 կադաստրային ծածկագրով, համայնքային սեփականություն հանդիսացող (վկայական՝ 15042024-10-0038, գաղտնաբառ՝ 9L2NZWYBIAIA) հողամասը (նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման, մակերեսը՝ 0,04 հա) բնակելի կառուցապատման գործունեության նպատակով աճուրդային եղանակով օտարելու մասին Վայք համայնքի ղեկավարի առաջարկությանը. հողամասի վաճառքի մեկնարկային գինը սահմանել 751 100 (յոթ հարյուր հիսունմեկ հազար մեկ հարյուր) ՀՀ դրամ:

գ/ Վայք համայնքի Վայք քաղաքի Ա. Մելիքյան փողոց, 1-ին նրբանցք 17/1 հասցեում գտնվող 10-003-0004-0399 կադաստրային ծածկագրով, համայնքային սեփականություն հանդիսացող (վկայական՝ 15042024-10-0030, գաղտնաբառ՝ 8KZBP1VK3P2I) հողամասը

(նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման, մակերեսը՝ 0,0016 հա) բնակելի կառուցապատման գործունեության նպատակով աճուրդային եղանակով օտարելու մասին Վայք համայնքի ղեկավարի առաջարկությանը. հողամասի վաճառքի մեկնարկային գինը սահմանել 30 100 (երեսուն հազար մեկ հարյուր) ՀՀ դրամ:

դ/ Վայք համայնքի Վայք քաղաքի Կամոյի փողոց, 1-ին նրբանցք 17 հասցեում գտնվող 10-003-0008-0134 կադաստրային ծածկագրով, համայնքային սեփականություն հանդիսացող (վկայական՝ 15042024-10-0034, գաղտնաբառ՝ 2GRBZJ9AG4M8) հողամասը (նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման, մակերեսը՝ 0,0981 հա) բնակելի կառուցապատման գործունեության նպատակով աճուրդային եղանակով օտարելու մասին Վայք համայնքի ղեկավարի առաջարկությանը. հողամասի վաճառքի մեկնարկային գինը սահմանել 1842 100 (մեկ միլիոն ութ հարյուր քառասուներկու հազար մեկ հարյուր) ՀՀ դրամ:

ե/ Վայք համայնքի Վայք քաղաքի Զառիթափ բնակավայրում գտնվող 10-022-0243-0028 կադաստրային ծածկագրով համայնքային սեփականություն հանդիսացող (վկայական՝ 13052024-10-0006, գաղտնաբառ՝ 2HEJEBDSLQWL) հողամասը (նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, հողատեսքը՝ այլ, մակերեսը՝ 0,85 հա) գյուղատնտեսական գործունեության նպատակով աճուրդային եղանակով օտարելու մասին Վայք համայնքի ղեկավարի առաջարկությանը. հողամասի վաճառքի մեկնարկային գինը սահմանել 170 000 (մեկ հարյուր յոթանասուն հազար) ՀՀ դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 49-Ա/

Լսեցին

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍԱՄՎԵԼ ԻԽՏԻԱՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 7-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին
կետով, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14.3-րդ հոդվածի 9-րդ մասով
, Կառավարության 2021 թվականի հունիսի 17-ի «Գյուղատնտեսական նշանակության հողերը ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի փոխադրման դեպքերը սահմանելու մասին» N 987-Ն որոշման 9-րդ կետով,

1. Տալ համաձայնություն Վայք համայնքի Նոր Ազնաբերդ բնակավայրում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 10-034-0112-0078 կադաստրային ծածկագրով, 1.04056 հա մակերեսով, գյուղատնտեսական նպատակային նշանակության

հողամասից (հողատեսքը՝ վարելահող) 0,1 հա
հողամասի նպատակային նշանակությունը փոխել որպես բնակավայրերի (գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) նպատակային նշանակության հողերի:

2. Վայք համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 50-Ա/

Լսեցին
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐՏԻՐՈՍ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑ, 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔ, 2/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ՇԵՆՔԻ ՀԱՐԱԿԻՑ 0.12 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՈՒՇ ՂԱԶԱՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 89-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով, ինչպես նաև ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածի 1-ին մասով՝

1.Վայք համայնքի Մարտիրոս բնակավայրի 1-ին փողոց, 1-ին նրբանցք, 2/1 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող մշակույթի տան հարակից հողատարածքը՝ 0,12 հա մակերեսով (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 12032024-10-0002), 10-033-0006-0024 կադաստրային ծածկագրով, նվիրաբերել Հայաստանի Հանրապետությանը՝ նոր հանրակրթական դպրոց կառուցելու նպատակով:

2.Առաջարկել Վայք համայնքի ղեկավարին՝ կնքել գույքի նվիրաբերության պայմանագիր:

3.Նվիրաբերության պայմանագրի կնքման, պայմանագրից բխող պետական գրանցման և այլ վճարներն՝ ամբողջությամբ ենթակա են վճարման նոր սեփականատիրոջ կողմից:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 51-Ա/

Լսեցին
ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Վայք համայնքի ավագանու 2022 թվականի մայիսի 13-ի «Վայք համայնքում սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծելու չափորոշիչները սահմանելու մասին» N 12-Ն որոշմամբ հաստատված կարգով և հիմք ընդունելով Վայք համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական աջակցություն ցուցաբերելու գործընթացն
ապահովելու հարցերի մշտական հանձնաժողովի թիվ 4 արձանագրությունը՝

1. Վայք համայնքի 2024 թվականի բյուջեի «Սոցիալապես անապահով անձանց աջակցություն» /4729/ հոդվածից դրամական օգնություն տրամադրել Վայք համայնքի հետևյալ բնակիչներին՝

1.1 Վարդիթեր Վասիլի Ավագյան՝ 30 000 (երեսուն հազար) ՀՀ դրամ

1.2 Գարրի Անդրեյի Առուստամյան՝ 30 000 (երեսուն հազար) ՀՀ դրամ

1.3 Վախթանգ Լեդիկի Երանոսյան՝ 30 000(երեսուն հազար) ՀՀ դրամ

1.4 Շիրակ Արթուրի Մակարյան՝ 100 000(մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 52-Ա/

Լսեցին
ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՈՒՇ ՂԱԶԱՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդված 1-ին մասով, 20-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով՝

1.Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքի ավագանու անդամներն իրենց պարտականությունների իրականացման հետևանքով կատարած ծախսերի դիմաց տրամադրել դրամական փոխհատուցում՝ կիսամյակի համար 75000 (յոթանասունհինգ հազար) ՀՀ դրամ :
2.Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետով նախատեսված դրամական փոխհատուցումը Վայք համայնքի ավագանու անդամներին տրամադրվում է.
1) Առանց ավագանու անդամների կողմից իրենց պարտականությունների կատարման

հետևանքով առաջացած ծախսերը հիմնավորող փաստաթղթերի ներկայացման.
2) Անկանխիկ, յուրաքանչյուր կիսամյակի համար մինչև հաջորդող ամսվա 10-ը:
3. Ավագանու անդամին տվյալ ամսում դրամական փոխհատուցում չի վճարվում, եթե նա այդ ամսվա ընթացքում բացակայել է ավագանու և մշտական հանձնաժողովի բոլոր նիստերից, բացառությամբ այն դեպքերի, երբ տվյալ ամսում ավագանու և մշտական հանձնաժողովի նիստեր չեն եղել:
4. Սույն որոշման 3-րդ կետում նշված բացակայությունները հիմնավորվում են ավագանու մշտական հանձնաժողովների նախագահների՝ հանձնաժողովի նիստերին ավագանու անդամների մասնակցության մասին տեղեկանքներով և համայնքապետարանի աշխատակազմի կողմից վարվող ավագանու նիստին մասնակցած ավագանու անդամների հաշվառման մասին տվյալներով, որոնք կազմվում են յուրաքանչյուր ամսվա համար՝ մինչև հաջորդ ամսվա 5-ը ներառյալ:
5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 53-Ա/

Լսեցին
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 17.10.2022 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 67-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

/Զեկ. ԱՆՈՒՇ ՂԱԶԱՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ Ընտանեկան օրենսգրքի 109-րդ հոդվածի 2-րդ մասով և ՀՀ կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի «Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ 164-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> թիվ 631-Ն որոշմամբ,

1.Ուժը կորցրած ճանաչել Վայք համայնքի ավագանու17.10.2022թ. թիվ 67-Ա որոշումը:
2.Ստեղծել Վայք համայնքի ղեկավարին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով:
3. Հաստատել համայնքի ղեկավարի առաջարկած խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի հետևյալ կազմը.
3.1.Հայկ Ավագյան-համայնքի ղեկավարի առաջին տեղակալ -հանձնաժողովի նախագահ,
3.2.Անուշ Ղազարյան-/աշխատակամի քարտուղար/-հանձնաժողովի քարտուղար,
3.3.Շուշանիկ Ասլանյան-/իրավաբան/-հանձնաժողովի անդամ,
3.4.Սուսաննա Կոստանյան -/մանկավարժ-հոգեբան/ -հանձնաժողովի անդամ,
3.5.Լուսինե Կարապետյան -«Սըլուշն ՀԱԲ» համայնքային զարգացման ՀԿ-հանձնաժողովի անդամ,
3.6.Խաչիկ Մկրտչյան -ՄՄԾ Վայքի տարածքային կենտրոն -հանձնաժողովի անդամ,
3.7.Նորայր Հովակիմյան -աշխատակազմի զարգացման ծրագրերի, սոցիալական աջակցության և առողջապահության հարցերի բաժնի պետ-հանձնաժողովի անդամ,

3.8.Հրաչիկ Մանուչարյան-Վայք համայնքի ավագանու անդամ /բժիշկ/-հանձնաժողովի անդամ,
3.9.Հովսեփ Զաքարյան- աշխատակազմի առաջատար մասնագետ/իրավաբան/-հանձնաժողովի անդամ,
3.10.Եվա Ջանոյան- աշխատակազմի զարգացման ծրագրերի, սոցիալական աջակցության և առողջապահության հարցերի բաժնի առաջին կարգի մասնագետ-հանձնաժողովի անդամ:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 54-Ա/

Լսեցին
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՐԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐԵՎԱՅԻՆ ԿԱՅԱՆ ԿԱՌՈՒՑԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍԱՄՎԵԼ ԻԽՏԻԱՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 39-րդ կետով, ՀՀ կառավարության 28.12.2023 թվականի N 2343-Ն որոշմամբ և հիմք ընդունելով սույն թվականին կայացած հանրային լսումների արձանագրությունները.

1. Տալ համաձայնություն «ԷԼԻՏ-ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-Ի կողմից Վայք համայնքի Սարավան բնակավայրի 8-րդ փողոց, 2/1 հասցեում գտնվող 6,20356 հա մակերեսով հողատարածքի վրա արևային ֆոտովոլտային կայանի կառուցման համար:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 55-Ա/

Լսեցին
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՐԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐԵՎԱՅԻՆ ԿԱՅԱՆ ԿԱՌՈՒՑԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍԱՄՎԵԼ ԻԽՏԻԱՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 39-րդ կետով, ՀՀ կառավարության 28.12.2023 թվականի N 2343-Ն որոշմամբ և հիմք ընդունելով սույն թվականին կայացած հանրային լսումների արձանագրությունները.

1. Տալ համաձայնություն «Արեգ Էներգիա» ՍՊԸ-Ի կողմից Վայք համայնքի Սարավան բնակավայրի տարածքում 6 ՄՎտ հզորությամբ արևային ֆոտովոլտային կայանի կառուցման համար:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 56-Ա/

Լսեցին
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ՍԻՄՈՆ ԲԱԲԱՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՇՄԱՎՈՆ ԱԶԱՏՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդված 1-ին մասի 42-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով քաղաքացու 06.05.2024թ-ի դիմումը,

1.Ուսումնասիրելով դիմումի բովանդակությունը, պարզ դարձավ, որ Վայք համայնքը նշված 10-013-0003-0039, 10-022-0208-0016, 10-022-0229-0015, 10-011-0110-0050, 10-011-0110-0046, 10-011-0112-0030, 10-011-0110-0049, 10-011-0112-0029, 10-011-0110-0048, 10-022-0218-0123, 10-022-0218-0122, 10-039-0306-0022, 10-039,0304-0120, 10-039-0304-0117, 10-039-0304-0118, 10-026-0112-0002, 10-026-0112-0003, 10-019-0317-0044, 10-039-0307-0077 և 10-039-0307-0076 ծածկագրերով հողերի օտարումից ֆինանսական վնաս չի կրել, մինչ օրս վճարվել են նշված օտարված հողերի հարկերը, հետևաբար Վայք համայնքը այդ հողերի նկատմամբ ֆինանսական պահանջ չունի:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 57-Ա/

Լսեցին
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ԵՎ ԺԱՄԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՈՒՇ ՂԱԶԱՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով՝

1.Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքի ավագանու հերթական նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2024 թվականի հունիսի 14–ին, ժամը՝ 15:30–ին:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 58-Ա/

Ավագանու անդամներ

ՀԱՅԿ ԱՎԱԳՅԱՆ

ԱՆՈՒՇ ԱՐԱՄՅԱՆ

ՍԻՄՈՆ ԲԱԲԱՅԱՆ

ԱՐՏԱՎԱԶԴ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՍՈՒՍԱՆՆԱ ԿՈՍՏԱՆՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ԿՈՍՏԱՆՅԱՆ

ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀՐԱՉԻԿ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՋԱՆՈՅԱՆ

Համայնքի ղեկավար

ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ_____

Նիստն արձանագրեց՝ Անուշ Ղազարյանը

_____